

## IHSS ինքնագնահատում և արդար լսման ուղեցույց

Յունիս, 2019թ., Յրապ.՝ #5013.10, հայերեն

Սույն ուղեցույցի նպատակն է օգնել Ձեզ՝ պատրաստվելու վարչաշրջանի IHSS աշխատակիցների նախնական ընդունելության գնահատման կամ տարեկան վերանյմանը: Սույն ուղեցույցը նաև կօգնի Ձեզ՝ ներկայացնելու ինքներդ Ձեզ և այլոց արդար լսումների ընթացքում, երբ տարածայնություն կա Տևային աջակցության ծառայությունների (IHSS, In-Home Supportive Services) Ձեզ անհրաժեշտ ժամաքանակի հարցում:

Ինքնագնահատում կատարելը կօգնի Ձեզ հասկանալ, թե քանի ժամի կարիք ունեք, ինչպես նաև այն, թե գնահատումը կատարող IHSS աշխատակցի ուշադրությունն ինչի վրա պետք է հրավիրել: Այս ուղեցույցը չի ընդգրկում այն ամենն առ այն, թե ինչպես է աշխատում IHSS ծրագիրը: Խնդրում ենք նայել IHSS-ին վերաբերող այլ հրապարակումները կամ գանգահարել մեզ, եթե ունեք հարցեր այն ոլորտների մասին, որոնք այս ուղեցույցը չի ընդգրկում, ինչպես օրինակ՝ IHSS արտաժամյա աշխատանքի կանոնները, այլընտրանքնային ռեսուրսները, բողոքարկմանը կամ լսմանն առնչվող խնդիրները (օրինակ՝ լիազորագիր ընդունելու մերժումը) կամ խնդիրներ, որոնք առնչվում են մշտական բնակության օրինական իրավունքին կամ այն վետերաններին, ովքեր IHSS-ի կարիք ունեն:

IHSS-ին վերաբերող մեր այլ հրապարակումները կարելի է գտնել այստեղ՝

<https://www.disabilityrightsca.org/publications/in-home-supportive-services-ihss>

Այս ուղեցույցը բաղկացած է 3 մասից:

1. **Առաջին մասում** նկարագրվում են IHSS գնահատումները և այն, թե ինչպես պետք է պատրաստվել, հարցեր և պատասխաններ IHSS-ի վերաբերյալ, ինչպես լսում խնդրել և ինչպես պատրաստվել դրան, և ինչ ակնկալել լսման ժամանակ:

2. **Երկրորդ մասում** ինքնագահատման թերթիկ կա՝ պատկերացում կազմելու այն մասին, թե քանի ժամի կարիք ունեք:
3. **Երրորդ մասում** կան օրինակներ IHSS ստացողներից, ովքեր բացատրում են, թե ինչու նրանք ավելի շատ IHSS ժամերի կարիք ունեն:

## **Մաս 1. IHSS գնահատումներ և արդար լսումներ**

### **Ի՞նչ է IHSS գնահատման գործընթացը:**

IHSS գնահատման ընթացքում վարչաշրջանի աշխատակիցը կգա Ձեր տուն և կորոշի, թե ինչ ծառայությունների իրավունք ունեք և ամսական քանի ժամ կստանաք: Դուք վարչաշրջանի գնահատում կունենաք.

- Երբ առաջին անգամ դիմեցիք IHSS-ի համար,
- սովորաբար, տարեկան մեկ անգամ, և
- ցանկացած պահի, երբ այն խնդրեք: Վարչաշրջանը պետք է Ձեր խնդրանքի պահից սկսած 30 օրվա ընթացքում կատարի գնահատումը և Ձեզ IHSS գործողությունների ծանուցում (NOA, Notice of Action) տրամադրի:

Ձեր IHSS NOA-ում նշված կլինի, թե վարչաշրջանի որոշմամբ քանի ժամի կարիք ունեք յուրաքանչյուր IHSS առաջադրանքի համար, որոնց համար օգնության կարիք ունեք: Ձեր IHSS NOA-ում նշված ժամանակը կլինի ժամերով և րոպեներով: Ձեր IHSS NOA նաև տեղեկություններ կպարունակի բողոքարկման Ձեր իրավունքների մասին:

### **Վարչաշրջանն ինչպե՞ս է չափում IHSS կարիքը:**

- Օրենք և կանոնակարգեր
  - Անհատների ծառայությունների կարիքը չափելու չափորոշիչը սահմանված է բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի 12300 հոդվածում (Welfare և Institutions Code Section 12300):
  - Դուք պետք է ի վիճակի չլինեք կատարել անհրաժեշտ ծառայությունները՝ Ձեր հաշմանդամության պատճառով:

- Դուք ծառայությունների կարիքն ունեք՝ (1) ապահով մնալու Ձեր տանը կամ որտեղ Դուք կընտրեք ապրել, և/կամ (2) կհաստատեք և կպահպանեք անկախ ապրելու պայմաններ:
  - Ժամաքանակը, որը կլիազորվի, հիմնված կլինի այն ժամերի վրա, որի ընթացքում Ձեր մատակատարարը կկատարի իրեն լիազորված առաջադրանքները:
  - Ոչ մի ժամ չի լիազորվի այն ծառայությունների համար, որոնք լուրջ Ձեր «հարմարավերություն» համար կլինեն:
  - Ամսական առավելագույն ժամերի քանակը 283 է:
- Ժամային առաջադրանքների նահանգային ուղեցույցներ. Ժամային առաջադրանքների ուղեցույցների (HTGs, Hourly Task Guidelines) համար տե՛ս Բոլոր վարչաշրջաններին վերաբերող տեղեկատվական ծանուցում (ACIN, All County Information Notice) թիվ I-82-17-ը (դեկտեմբերի 5, 2017թ.), որն առցանց մատչելի է այստեղ՝ <http://www.cdss.ca.gov/inforesources/2017-All-County-Information-Notices>

HTGs-ը վարչաշրջանի IHSS սոցիալական աշխատակցին խորհուրդ է տալիս որոշել գործունեությունը՝ օգտվելով դասակարգումներից, իսկ հետո տալ ժամերի քանակը՝ հիմնված այդ դասակարգման վրա:

### **Քայլ առաջին. Որոշել գործունեությունը**

IHSS սոցիալական աշխատողը պետք է որոշի, թե որքան օգնության կարիք ունեք **IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքի համար**: Դա կատարելու համար, նրանք օգտվում են HTGs-ից: IHSS սոցիալական աշխատողն սկսում է՝ դասակարգելով գործունեությունը յուրաքանչյուր հետևյալ ոլորտում.

- Տնային ծառայություններ (տնային գործեր).
- Լվացք.
- Գնումներ և փոքր հանձնարարություններ.
- Ճաշի պատրաստում/ճաշից հետո մաքրություն.
- Շարժվելու ընդունակություն (նախկին Տան մեջ շարժունակությունը).
- Լոգանք ընդունելը, բերանի հիգիենա և խնամք/քնելու, լոգանք ընդունելու ռեժիմ (լոգանք ընդունել և խնամք).
- Հագնվելը/պրոթեզային սարքեր (հագուստ).
- Չուղարանից օգտվելու խնամք.

- Փոխադրում (դիրքի փոփոխում).
- Ուտելը.
- Շնչառություն.
- Հիշողություն.
- Կողմնորոշում և
- Դատողություն:

Դասակարգումները կարող են 1-ից մինչև 5-ը լինել: Օրինակ՝ դասակարգում 1-ը նշանակում է, որ Դուք անկախ եք և կարող եք IHSS առաջադրանքն առանց օգնության կատարել, իսկ դասակարգում 5-ը նշանակում է, որ Դուք չեք կարող IHSS աշխատանքը կատարել՝ օգնությամբ կամ առանց դրա: IHSS դասակարգումը, որը հիմնված է Ձեր գործունեության վրա, հետևյալն է՝

**Դասակարգում 1.** Դուք անկախ եք. **ի վիճակի եք առանց օգնության կատարել IHSS առաջադրանքները:** Այն ստացողը, որը դասակարգվում է «1»-ում որևէ գործառույթի համար չի կարող այդ ծառայության համար ժամ ստանալ:

**Դասակարգում 2.** Դուք կարող եք կատարել IHSS առաջադրանքները **բառացի օգնության միջոցով**, օրինակ՝ IHSS մատակարարի հիշեցնելով, ուղղորդմամբ կամ խրախուսմամբ:

**Դասակարգում 3.** Դուք կարող եք կատարել IHSS առաջադրանքները **որոշակի օգնությամբ**, ներառելով, բայց չսահմանափակվելով IHSS մատակարարի ուղղակի ֆիզիկական աջակցմամբ:

**Դասակարգում 4.** Կարող եք կատարել IHSS առաջադրանքները, բայց միայն **IHSS մատակարարի** Էական աջակցությամբ:

**Դասակարգում 5.** Դուք **չեք կարող կատարել IHSS առաջադրանքը**, IHSS մատակարարի օգնությամբ կամ առանց դրա:

Եթե ամսվա ընթացքում Ձեր գործունակությունը փոխվում է, ապա յուրաքանչյուր առաջադրանքի գործունեության դասակարգումը պետք է արտացոլի Ձեր գործունակությունը՝ հիմնվելով վատ օրերի վրա:

**Քայլ 2. Օգտվեք ժամային առաջադրանքի ուղեցույցներից՝ լիազորելու գործունակության վրա հիմնված ժամերը**

Չաչորդ քայլը HTGs օգտագործելն է՝ որոշելու, թե քանի ժամ պետք է լիազորվի յուրաքանչյուր առաջադրանքի համար: Ուղեցույցների նպատակն է օգնել IHSS սոցիալական աշխատողին՝ որոշելու, թե քանի ժամ պետք է տրամադրվի **IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքի համար**, որի առնչությամբ Դուք օգնության կարիք ունեք: Այս ուղեցույցները նաև օգնում են IHSS սոցիալական աշխատողներին՝ որոշելու, թե երբ պետք է բացառություններ արվեն, որպեսզի IHSS ստացողը կարողանա յուրաքանչյուր IHSS առաջադրանքի համար ճիշտ քանակով օգնություն ստանալ:

Օրինակ՝ IHSS յուրաքանչյուր առաջադրանքի համար, որի համար օգնության կարիք ունեք, HTGs-ը որոշակի քանակով ժամեր է տրամադրում (ցածրից մինչև բարձր) յուրաքանչյուր գործունակության ինդեքսի դասակարգման համար: Չեղարկելով, եթե Դուք հազնվելու առաջադրանքում դասակարգված եք որպես 2, ժամերի որոշակի քանակություն կա, որոնք Դուք կարող եք ստանալ: Չիշեք, որ HTGs-ը կարող է օգտագործվել միայն եթե համապատասխանում է՝ Ձեր անձնական հանգամանքները բավարարելու համար: Սա նշանակում է, որ Դուք կարող եք ավելի շատ կամ ավելի քիչ ժամեր ստանալ՝ HTGs-ի նախատեսածի համեմատ, եթե սոցիալական աշխատողը փաստաթղթերով հիմնավորի, թե ինչու Դուք ավելի քիչ կամ ավելի շատ ժամերի կարիք ունեք: Այս ուղեցույցի 3-րդ մասում նկարագրողումներ են տրամադրված առ այն, թե երբ ուղեցույցները չեն համապատասխանում՝ անհատական հանգամանքների պատճառով:

- Օրագրի մատյան
  - Գնահատմանը կամ արդար լսմանը պատրաստվելու հիմնական մասը օրագրի մատյանն է, այսինքն՝ այն, ինչ արվում է ամեն օր և յուրաքանչյուր առաջադրանքը որքան է տևում: Սա արվում է այն պատճառով, որ Դուք կարողանաք ստանալ այն ժամաքանակը, որի կարիքն ունեք՝ IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանք կատարելու համար, որի համար օգնության կարիք ունեք: Մարդիկ հազվադեպ են հասկանում բոլոր այն առաջադրանքները, որոնք ներռաված են խնամքի մեջ, ինչպես նաև այն ժամանակը, որն անհրաժեշտ է առաջադրանքի կատարման համար:
    - Օրինակ՝ լոգարանային դեպքի համար մաքրելու ժամանակը (որը զուգարանից օգտվելու խնամքի մի մաս է), պարզապես մաքրելու համար նախատեսված ժամանակը չէ, այլ նաև մաքրության կյուրերը դուրս հանելու և դրանք կրկին իրենց տեղը դնելու համար նախատեսված ժամանակը: Եթե մարմնի հեղուկների կամ կղկղանքի հետ կապված դեպքեր

կան, Դուք պետք է լրացուցիչ ժամեր ներառեք՝ ընդհանուր նախազգուշական միջոցների համար: Ընդհանուր նախազգուշական միջոցները ներառում են ձեռքերի լվացումը և ձեռնոցների կամ դիմակների օգտագործում, երբ որ Դուք հպում եք մարմնի հեղուկներին և արտաթորանքներին (մեզ, կղկղանք, արյուն, հեշտոցային արտազատուկներ, սերմնահեղուկ, թարախ, թուք) կամ հպել լվացքի, հագուստների կամ այլ բաների, որոնք թրջվել են մարմնի հեղուկներով:

- Առաջադրանքի համար ներառված ժամերը ամեն օր կարող են փոխվել: Օրինակ՝ սպաստիկ տեսրապայեգիայով ուղեղային կաթված ունեցող հիվանդին հազցնելը մեկ օր երկու անգամ ավելի երկար կարող է տևել, քան հաջորդ օրը՝ վերջույթների ճկունության տարբերության պատճառով: IHSS-ը հիմնվում է միջին հաշվարկով ժամերի վրա, հետևաբար կարևոր է իմանալ այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ առաջադրանքը կարող է կատարվել:
- Երբեմն IHSS-ի սոցիալական աշխատողները միշտ չէ, որ կարող են որոշել, թե երբ Դուք ավելի շատ ժամերի կարիք ունեք, քան HTGs-ն առաջարկում է: Հիշեք, որ **Դուք իրավունք ունեք այնքան ժամանակի, որքան անհրաժեշտ է IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքը կատարելու համար, որի համար Դուք օգնության կարիք ունեք**: Ահա թե ինչու այդքան կարևոր է, որ Դուք և Ձեր մատակարարը հետևեք IHSS-ի այն բոլոր ծառայություններին, որոնց համար օգնության կարիք ունեք, ինչպես նաև այն, թե յուրաքանչյուր առաջադրանքը կատարելու համար որքան ժամանակի կարիք ունեք: Մենք խորհուրդ ենք տալիս, որ Դուք սա կատարեք վարչաշրջանի աշխատակցի ժամանումից և նախնական գնահատում կամ վերագնահատում կատարելուց առնվազն 2 շաբաթ առաջ:
- Եթե վարչաշրջանի IHSS աշխատակցի հաջորդ այցելությունը վերագնահատում կատարելու համար է, վերանայեք ժամերի քանակը, որոնք ներկա պահին լիազորված են որոշակի առաջադրանքների համար: Եթե լիազորված ժամանակը դուրս է որևէ առաջադրանքի սահմաններից, պատրաստվեք բացատրելու, թե ինչու Դուք ավելի շատ ժամերի կարիք ունեք (քան HTGs-ն է

թույլատրում)՝ ավարտելու IHSS առաջադրանքը, որի համար Դուք  
օգնության կարիք ունեք:

## **Ինչպե՞ս կարող եմ իմ սեփական գնահատումն անցկացնել:**

Նախքան Ձեր տնային գնահատումը կամ լսումը, լրացրեք IHSS  
հարցաթերթիկը 2-րդ Մասում: Այս հարցաթերթիկը կօգնի Ձեզ հետևել, թե  
որքան ժամանակի կարիք ունեք՝ IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքի  
համար: Հարցաթերթիկը, վարչաշրջանի գնահատման պես, հիմնված է 1-  
շաբաթյա ժամանակահատվածի վրա, բացի տնային ծառայությունների  
մուտքագրման համար, որը 1 ամսով է: Երբ որ դուք փաստաթղթերով  
հիմնավորեք, թե շաբաթվա ընթացքում քանի ժամ օգնության կարիք ունեք՝  
IHSS-ի յուրաքանչյուր առաջադրանքն ավարտելու համար, Դուք կարող եք դա  
համեմատել HTGs-ի հետ: Եթե Դուք HTGs-ի առաջարկածից ավելի շատ  
ժամանակի կարիք ունեք՝ Ձեր գործունակության վրա հիմնված, Դուք կարող  
եք ավելի շատ ժամ ստանալ, քանի դեռ Ձեր սոցիալական աշխատողը  
փաստաթղթերով կհիմնավորի ( օրինակ՝ IHSS գործի ֆայլում կգրի այն  
պատճառները, որոնց հիման վրա Դուք ավելի շատ ժամերի կարիք ունեք), թե  
ինչու Դուք լրացուցիչ ժամերի կարիք ունեք:

Այս ուղեցույցում, մենք կարող ենք ժամերի և րոպեների ձևաչափն  
օգտագործել այնպես, ինչպես նշված է ACIN-ում, թիվ I-82-17 (5 դեկտեմբերի,  
2017թ.), մատչելի է առցանց, այստեղ՝  
<http://www.cdss.ca.gov/inforesources/2017-All-County-Information-Notices> Ձեր  
IHSS NOA-ն նույնպես ժամերի և րոպեների ձևաչափով է:

Եթե Դուք ավելի շատ IHSS ժամերի կարիք ունեք, քան HTGs-ի  
քանակությունն է (տե՛ս ACIN թիվ I-82-17 հղումը վերևում), գրեք այն  
պատճառները, որոնց համար Դուք ավելի շատ ժամանակի կարիք ունեք: Ձեզ  
օգնելու համար այս ուղեցույցի 3-րդ մասում նշված են այն «Գործոնների կամ  
պատճառների ցանկը, թե ինչու ավելի շատ IHSS ժամերի կարիք կա», որը  
մենք տեսել ենք առանձին դեպքերում: Այս պատճառներից մի քանիսը կարող  
են վերաբերել Ձեր գործին:

## **Ինչպե՞ս կարող եմ պատրաստվել վարչաշրջանի գնահատմանը:**

Տնայցի նպատակն է պարզել, թե ինչ եք կարողանում և ինչ չեք կարողանում  
ինքներդ անել, ինչ ծառայությունների կարիք ունեք, ինչպես նաև այն ժամերի  
քանակը, որոնց կարիքն ունի Ձեր մատակարարը՝ այդ ծառայությունները

կատարելու համար: Ձեր պարտականությունն է օգնել վարչաշրջանի IHSS աշխատակցին՝ հասկանալ Ձեր ողջ խնամքը և հատուկ խնամքի կարիքները, և այն, թե դրանք կատարելու համար որքան ժամանակ կպահանջվի: Կարևոր է ազնիվ և բաց լինել: Նվազագույնի մի՛ հասցրեք Ձեր հաշմանդամության խնդիրները և խնամքի կարիքները, որովհետև դրա պատճառով կարող եք զրկվել Ձեզ անհրաժեշտ ժամաքանակից: Նույնիսկ եթե Դուք շփոթված զգաք, իրավիճակն ամբողջությամբ բացատրեք, որպեսզի վարչաշրջանի աշխատակիցը հասկանա Ձեր վիճակը:

Նախքան վարչաշրջանի աշխատակցի ժամանումը պատրաստ ունեցեք IHSS հարցաթերթիկի 2-րդ մասը այն ժամաքանակով, որոնց կարիքը կարծում եք ունեք: Հիշեք, որ վարչաշրջանը կլիազորի միայն այն, ինչի կարիքը Դուք իսկապես ունեք և լրացուցիչ ժամեր չի թույլատրի «հարմարավետության» ծառայությունների համար: Հարմարավետության ծառայության օրինակ է չափից ավելի փոշիներ մաքրելը՝ իրերին ավելի գեղեցիկ տեսք տալու համար:

Պատրաստ եղեք բացատրելու Ձեր հարցաթերթիկների ժամերը: Ցանկ կազմեք, որպեսզի որևէ բան չմոռանաք:

- ինչ առաջադրանքների կարիք ունեք կամ Ձեր մատակարարը կարիք ունի
- ինչպես եք որոշում յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ժամանակը (հատկապես կարևոր է, եթե տարբերություններ կան այն ամենի միջև, թե ինչ է նախապես լիազորել վարչաշրջանը և Ձեր կարծիքով ինչի կարիք ունեք Դուք հիմա)
- ինչու նահանգի ժամային առաջադրանքների ուղեցույցները համապատասխան չեն Ձեր խնամքի կարիքներին (կարող է Ձեր վիճակի չհամապատասխանել)
- ինչ հատուկ գործոններ պետք է ի նկատի ունենալ

## **Ինչպե՞ս կարող եմ փաստաթղթերով հիմնավորել հատուկ գործոնները:**

Ձեր բժշկից փաստաթղթերով հիմնավորում ստացեք Ձեր հատուկ կարիքների վերաբերյալ: Օրինակ՝

- նշում , որ Դուք փոշուց զերծ միջավայրի կարիք ունեք ալերգիաների կամ թոքային/շնչուղիների խնդիրների պատճառով
- նշում՝ հաստատելու միզելու և կրկդանքի հետ առնչվող խնդիրները



- Նշում առ այն, որ Դուք կարիք ունեք, որ Ձեր անկողնու սավանները ամիսը երկու անգամից ավելի շատ փոխվեն

## **Որո՞նք են պարամեդիկ ծառայությունները:**

Պարամեդիկ ծառայությունները նշանակվում են բժշկի կողմից՝ Ձեր առողջության համար, և որոշակի վերապատրաստում և դատողություն են պահանջում՝ կատարելու համար: Սովորական ծառայություններն են ներարկումները, կոլոստոմիայի լվացում, կատետրի գետեղում/խնամք, ներծծում, G և NG խողովակների սնուցում, օդափոխիչի և թթվածնային խնամք, կղկղանքի խցանում, շարժման տարածում՝ գործունակությունը բարելավելու համար, վերքի/պառկելախոցի խնամք և այլ ծառայություններ, որոնք ստերիլ ընթացակարգեր են պահանջում: Հավելյալ ժամանակ խնդրեք՝ ողջ ծառայությունն ավարտելու համար՝ սկսած նախապատրաստումից մինչև մաքրում: Մատակարարները երբեմն հավելյալ ժամանակ չեն խնդրում, որը կարող է պահանջվել արձանագրություն կատարելու համար, օրինակ՝ շաքարախտի ստուգումների և ներարկումների կատարման համար:

Պարամեդիկ ծառայությունները կարևոր են, որովհետև այն մարդիկ, ովքեր կոմպլեքս բժշկական խնամքի կարիք ունեն, կարող են մնալ տանը՝ ծերանոց գնալու փոխարեն: Միաժամ բժիշկներն են որոշում, թե ինչ ծառայություններ պետք է վարչաշրջանը տրամադրի և որքան ժամի համար պետք է վճարի: Վարչաշրջանը չի կարող կրճատել բժշկի կողմից պատվիրված ժամաքանակը: Մատակարարները որևէ հատուկ արտոնագրի կարիք չունեն՝ այդ ծառայությունները կատարելու համար:

Իրավունակ լինելու համար՝

- Բժիշկը լրացնում և ստորագրում է պատվերը՝ ծառայությունների համար պահանջվող ժամաքանակով: Ձեր բժիշկը կորոշի իրավունակության պայմանները՝ ստորագրելով այն պատվերը, որտեղ նշանակված են ծառայությունները և ժամերը: Վարչաշրջանը կարող է ձևաթուղթը Ձեր բժշկին ուղարկել: Բժշկի կլինիկային տեղյակ պահեք, որ այն գալիս է, և կարող եք ներգրավվել և օգնել այդ հարցում:
- Դուք ընդհանրապես չեք կարողանում կատարել ծառայությունները. Որոշ հոգեկան կամ ֆիզիկական խնդիրներ խանգարում են Ձեզ դա անել, օրինակ՝ ներարկումը կամ կատետր փոխելը:

- Այս ծառայությունը վերապատրաստում և դատողություն է պահանջում կատարելու համար. Մատակարարը վերապատրաստվում է բժշկի կամ առողջապահության այլ մասնագետի կողմից առ այն, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել և յուրաքանչյուրն ինչպես անել՝ ծառայությունն ավարտելու համար: Այդ քայլերը պահանջում են, որ մատակարարն ուշադիր դիտարկի Ձեզ՝ սխալներից խուսափելու համար:

Պարամեդիկ ձևաթուղթ SOC 321-ը առցանց առկա է այստեղ՝ <http://www.cdss.ca.gov/cdssweb/entres/forms/English/SOC321.pdf>

Վարչաշրջանները տարբեր տեսակի մարտավարություններ են օգտագործում մերժելու կամ փոխելու այն պարամեդիկ ծառայությունները, որոնք բժիշկները լիազորել են: Սրանք միջոցներ են՝ դադարեցնելու դրանց աշխատանքը:

- Վարչաշրջանում Ձեզ կասեն, որ որոշ ծառայություններ կարող են չթույլատրվել որպես պարամեդիկ ծառայություններ: Պատասխան. ծառայությունը քննարկեք բժշկի հետ: Բացատրեք, որ ցանկացած ծառայություն, որի համար հաշիվ է ներկայացվում որպես փորձառու բուժքույրական ծառայություն, Medi-Cal/Medicare-ի ներքո իրավունք է տրամադրվում դրանցից օգտվել: Բժիշկները սովորաբար գիտեն, թե որոնք են դրանք:
- Վարչաշրջանը փորձում է բժշկին համոզել՝ փոխել ծառայությունների կամ ժամերի պատվերը: Պատասխան. Նախ խորհրդակցեք բժշկի հետ և ժամերի հաստատում ստացեք՝ Ձեր մատյանի վրա հիմնված, քննարկեք Ձեր պայմանները բժիշկ-հիվանդ հարաբերությունները արտաքին միջամտությունից պաշտպանելու կարիքը: Բացատրեք, որ SOC 321 ստորագրված ձևաթղթի վրա դրված բժշկի որոշումը վերջնական է և վարչաշրջանը պետք է համապատասխանի դրան:
- Վարչաշրջանի բուժքույրը մեկ օր դիտարկում է և ըստ իր դիտարկման հիմնավորում է ավելի քիչ ժամաքանակ և զանգահարում է բժշկին: Պատասխան. Մատյանը ցույց է տալիս, որ ժամերը տարբեր են. Միջին հաշվարկով ժամերի քանակն ավելի շատ է, քան դիտարկման օրը:
- Վարչաշրջանն ասում է, որ տնային առողջապահության գործակալությունը կտրամադրի, նախ կկիրառի այնտեղ: Պատասխան. Տնային առողջապահության գործակալությունն այլընտրանքային ռեսուրս չէ, քանի որ տնային առողջապահության գործակալությունները սահմանափակ ժամերով ծառայություններ են տրամադրում:

- Վարչաշրջանն ասում է, որ շարժման սահմանն անձնական խնամքի ծառայությունն է, որի համար վարչաշրջանն է որոշում իրավունակությունը և ժամերը: Պատասխան. Երբ բժիշկը նշանակում է շարժման սահմանը՝ նաև բարելավելու և պահպանելու գործունակությունը միևնույն ժամանակ, դա պարամեդիկ ծառայությունն է:

Պարամեդիկ ծառայությունների, ինչպես նաև դրանք ստանալու հուշումների մասին հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ պարամեդիկին վերաբերող մեր հրապարակումը, որը կարելի է գտնել այստեղ՝ <https://www.disabilityrightsca.org/publications/the-ihss-program-covers-paramedical-services>

## **Ի՞նչ է պաշտպանիչ վերահսկումը:**

Պաշտպանիչ վերահսկումը ծանր հոգեկան խխնդիրներ ունեցող անձանց հետևելն է, որպեսզի նրանք տանը իրենք իրենց չվնասեն: IHSS տրամադրողը կարող է վճարվել՝ կանխելու վնասվածքները կամ դժբախտ պատահարները, երբ անձը կարիք ունի 24- ժամյա վերահսկողության և կարող է տանը ապահով լինել, եթե այն տրամադրվի: Պաշտպանիչ վերահսկողությունը կարևոր է, որովհետև IHSS ստացողները կարող են մեծ քանակությամբ ամսական ժամեր ստանալ, առնվազն 195 ժամ ոչ ծանր խնդիրներով անձանց համար և 283 ժամ՝ «ծանր խնդիրներով» անձանց համար: IHSS ստացողները կստանան առավելագույնը (195 կամ 283), նույնիսկ եթե վարչաշրջանը կրճատի ժամերը՝ այլ IHSS ծառայության համար:

Իրավունակ լինելու համար՝

- Անձը պետք է մի քանի լուրջ հոգեկան խնդիրներ ցույց տա. վատ դատողություն (առողջության կամ ապահովության վերաբերյալ վատ որոշումներ կայացնելը), շփոթմունք/ապակողմնորոշում (աննպատակ թափառելը, կորելը, մարդկանց, օրերը կամ ժամերը խառնելը) կամ վատ հիշողություն (ինչ-որ բան սկսելը կամ ավարտելը մոռանալով): Նման խնդիրները կարող են առաջանալ մտավոր հաշմանդամության, աուտիզմի, դեմենցիայի և հոգեբուժական հաշմանդամությունների դեպքում:
- Անձը վտանգված կլինի վնասվելու, եթե նա տանը մենակ մնա (տանից դուրս թափառելով, անձանոթներից տուն հրավիրելով, գազօջախը

բացելով, հրդեհ առաջացնելով, ջրի ծորակը բաց թողնելով, սխալ սնունդ կամ ուտելու ոչ ենթակա բաներ ուտելով, գլուխը պատերին հարվածելով, ինքը իրեն կծելով, ճանկռելով, դանակներ կամ տան այլ սուր իրեր գործածելով):

- Անձը պետք է կարիք ունենա օրը 24 ժամ վերահսկման (տանը ապրող ընկերներ կամ բարեկամներ, դպրոցի կամ խնամքի կենտրոնի ուսուցիչներ և մեքենայի կամ ավտոբուսի վարորդներ):

Վարչաշրջանը կարող է բուժող բժշկին ձևաթուղթ ուղարկել՝ ստացողի հոգեկան վիճակի մասին տեղեկություններ խնդրելով, եթե տվյալ անձը պաշտպանիչ վերահսկման կարիք ունենա: Բժշկի ընդունարանին տեղյակ պահեք, որ նման ձևաթուղթ է սպասվում, որպեսզի կարողանաք օգնել բժշկին լրացնել ձևաթուղթը: Դուք նաև կարող եք ինքներդ ներբեռնել ձևաթուղթը և այն լրացնել տաք բժշկին: Ձևաթուղթն այստեղ է՝

<http://www.cdss.ca.gov/cdssweb/entres/forms/English/SOC821.PDF>

## **Ինչպե՞ս են երեխաները գնահատվում պաշտպանիչ վերահսկման համար:**

«All County Letter» (ACL) 15-25, Էջ 6-ում ասվում է, որ վարչաշրջանը պետք է հետևի 4 քայլից բաղկացած գործընթացի՝ որոշելու պաշտպանիչ վերահսկման իրավունակությունը: Այն պետք է որոշի՝

- 1) Արդյո՞ք անչափահասը ինքն իրեն չի կարողանում կառավարել մտավոր խնդիրների/հոգեկան հիվանդության պատճառով:
- 2) Եթե անչափահասը մտավոր խնդիրներ/հոգեկան հիվանդություն ունի և ինքն իրեն չի կառավարում, արդյոք հավանակա՞ն է, որ նա կներառվի հավանական վտանգավոր գործողություններում:
- 3) Արդյո՞ք նա նաև **«ավելի շատ վերահսկման»** կարիք ունի իր տարեկից այն անչափահասի համեմատությամբ, ով մտավոր խնդիրներ/հոգեկան հիվանդություն չունի ըստ «Garrett-ն ընդդեմ Anderson-ի» դատարանի կարգադրության: **«Ավելի շատ վերահսկումը» կարող է ավելի շատ ժամ, ավելի շատ եռանդ կամ երկուսն էլ նշանակել:** Պահանջվող լրացուցիչ վերահսկումը պետք է Էականորեն ավելի շատ լինի, քան երեխայի ընթացիկ խնամքը և կապված լինի ոչ միայն երեխայի գործունակության սահմանափակումների հետ, այլ նաև թույլ տա, որ երեխան ապահով մնա իր տանը՝ այս աջակցության հետ միասին: Օրինակ՝ ոչ-հաշմանդամ երեխան կհասկանա ցավը և կդադարի վնասակար բնավորությունը: Մտավոր խնդիրներ ունեցող երեխան

կարող է չհասկանալ ցավը և շարունակել ինքն իրեն վնասել, մինչև որ վերակառավարվի: Ավելի շատ վերահսկման կարիք կարող է լինել, քանի որ անընդհատ կարիք կա ավելի եռանդուն վերահսկման (այսինքն երեխան հետևելու), ինչպես նաև անընդհատ կարիք կա երեխային վերակառավարելու՝ վնասվածքից խուսափելու համար:

- 4) Եթե «ավելի շատ վերահսկման» կարիք լինի, արդյո՞ք 24-ժամյա վերահսկման կարիք կլինի, որպեսզի անչափահասը տանը ապահով լինի:

Դուք կարող եք գտնել ACL 15-25 առցանցն այստեղ՝

<https://www.cdss.ca.gov/lettersnotices/EntRes/getinfo/acl/2015/15-25.pdf>

Պաշտպանիչ վերահսկման մասին այլ ACLs-ները ներառում են՝

ACL 98-87 առցանց՝

<https://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl98/98-87.PDF> և,

ACL 17-95 առցանց՝ <https://www.cdss.ca.gov/Portals/9/ACL/2017/17-95.pdf?ver=2017-09-14-113431-017>.

## **Ինչպե՞ս պետք վարվեմ պաշտպանիչ վերահսկման մերժումների դեպքում:**

Վարչաշրջանները սովորաբար մի քանի հաճախ հանդիպող արդարացումներ են ներկայացնում՝ ինչ-որ մեկին ասելու, որ նա իրավունակ չէ պաշտպանիչ վերահսկողության համար: Ահա ցանկը և մի քանի ձևեր՝ դրանք հերքելու համար:

Արդյոք առկա՞ է ծանր հոգեկան դժվարություն:

- Վարչաշրջանի արդարացումը. Ծանր հոգեկան դժվարությունները չեն դիտարկվել տուն կատարած այցերի ժամանակ: Պատասխան. Ձեր ամենօրյա գրանցամատյանը, բժշկի հայտարարությունը, շրջանային կենտրոնի արձանագրությունները. Տեսանելի այցելությունները շատ կարճ են, դիտարկված վարքագծի և ուղեցույցների հարցերին պատասխան չի տրվել. Վարչաշրջանի գնահատման փաստաթղթերը ծանր մտավոր խնդիրների առկայություն են ցույց տալիս:
- Վարչաշրջանի արդարացումը. Պաշտպանիչ վերահսկողության կարիք կա ֆիզիկական այլ ոչ թե մտավոր խնդիրների պատճառով:

Պատասխան. Մտավոր խնդիրների պատճառով չի հասկանում ֆիզիկական խնդիրները, չի հասկանում կամ գնահատում ֆիզիկական խնդիրների վրա ազդող գործողությունների հետևանքները (փորձում է վեր կենալ կամ քայլել առանց օգնության, երբ չի կարող դա անել առանց վնասվածքի վտանգի, քաղցրավենիքներ կուտի, թեև վնասվածք ստանալու վտանգ կա շաքարախտի պատճառով, կհանի վիրակապը կամ խողովակը կամ ուսագոտին, քանի որ այն ցավեցնում կամ նեղում է և այլն):

- Վարչաշրջանի արդարացումը. ֆիզիկական դժվարությունները վտանգավոր վարքագծի պատճառ են դառնում: Պատասխան. Մտավոր խնդիրները նույնպես առաջացնում են այն, չի պահանջվում, որպեսզի հոգեկանը/մտավորը որպես միակ պատճառ ներկայացվի:

#### Տանր վտանգավոր վարքագիծ կա՞:

- Վարչաշրջանի արդարացումը. Հոգեկան խնդրի պաշտոնական ախտորոշումը կարիքը չի ապացուցում: Պատասխան. Բժշկի հայտարարությունն այդ ախտորոշումն ունեցող անձի նմանատիպ վարքագծով:
- Վարչաշրջանի արդարացումը. Վերջերս վնասվածք չի ունեցել: Պատասխան. Ստացողը լավ է վերահսկվել:
- Վարչաշրջանի արդարացումը. Փաստեր չկան, որ վտանգավոր վարքագիծ է դրսևորվել վարչաշրջանի աշխատակցի տնայնի ժամանակ: Պատասխան. Հաճախակապությունը ժամով չի եղել: Նախորդող և հաջորդող օրերը բաց են թողնվել: Անհնար է ընդհանրացնել 1-ից մինչև 24 ժամ օրվա ընթացքում:
- Վարչաշրջանի արդարացումը. «Ամբողջական» ֆիզիկական կաթվածը թույլ չի տալիս, որպեսզի ստացողը որևէ վտանգավոր բան կատարի: Պատասխան. Ցանկացած նպատակային գործողություն, որը վտանգավոր է, կատարողը դուրս հանելը, G-խողովակը և այլն:
- Վարչաշրջանի արդարացումը. Ազդեցիկ և չշփվող է դառնում, եթե որևէ մեկին հարվածում կամ գույքը վնասում է: Պատասխան. Չափահասների մոտ. Ինքնավնասման գործողություններ, օրինակ՝ ինքն իրեն կծելը, գլուխը պատերին հարվածելը, գույքը վասելը, որը վնասվածք է առաջացնում. սրանք հաճախ հանդիպող հոգեբուժական կամ հոգեկան

առողջական խնդիրներ են: Երեխաների մոտ: Սովորական վարքագիծը հաճախ ագրեսիվ և չշփվող է:

24-ժամյա վերահստողության կարիք կա՞ և այն ստանո՞ւմ է:

- Վարչաշրջանի արդարացումը. 24-ժամյա վերահստողության կարիք չկա, որովհետև որոշ ժամերի չի վերահսկվում, օրինակ՝ ավտոբուսում, մեքենայի մեջ եղած ժամանակ: Պատասխան. Միշտ վերահսկվում է, ավտոբուսը/մեքենան վերահսկվող միջավայրեր են, չափահաս վարորդներով:
- Վարչաշրջանի արդարացումը. Ստացողը երբեմն մենակ է մնում, հետևաբար 24 ժամ չի վերահսկվում: Պատասխան. Ի վիճակի չէ դա անելու, ինչ-որ մեկը խնամում է, բարեբախտաբար դեպքեր չեն եղել, ստացողի վիճակը վատացել է:
- Վարչաշրջանի արդարացումը. Ֆիզիկական վերակառավարման կարիք ունի, ոչ թե պարզապես հսկելու կամ բառացի հրահանգների: Պատասխան. Վերահսկումը ներառում է վերակառավարում, որոշակի միջամտություն:
- Վարչաշրջանի արդարացումը. Ընտանիքը անկախություն չի խրախուսում և չափից ավելի է պաշտպանում թեթև մտավոր խնդիրներ ունեցող անձին: Պատասխան. Ավելի շատ անկախությունը վնասվածքներ և պատահարին մոտ դեպքերի պատճառ է եղել անցյալում. Այլ մարդիկ (տարածաշրջանային կենտրոնի բժիշկը) 24-ժամյա վերահսկողություն է առաջարկում:
- Վարչաշրջանի արդարացումը. Միջավայրը փոխել՝ վտանգները հեռացնելու համար. Փակել գազօջախի բռնակները, գործիքները կողպեքով փակել. Սայլակի բռնակ, անձին փոկերով ամրացնել սայլակի մեջ. Փակել տաք ջրի ծորակները. Անկողնու ավելի բարձր ճաղեր՝ գիշերը թափառելու դեմ պայքարելու համար. Կահույքն ամրացնել: Պատասխան. Անհնար է բոլոր փոփոխությունները կատարել. Այլ մարդիկ տունը դարձնում են ծերանոց կամ բանտախուց. Ստացողը որքան ծեր է, այնքան քիչ փոփոխություն է հնարավոր կատարել՝ առանց տանը բնորոշ հատկանիշները կորցնելու:
- Վարչաշրջանի արդարացումը. Երեխան դուրսը խաղում է առանց չափահասի վերահսկողության: Պատասխան. Ցանկապատով

առանձնացված է բախում. Չի կարող դուրս ցատկել. Բախում վտանգներ չկան

- Վարչաշրջանի արդարացումը. Երեխաներին միշտ պետք է չափահաս վերահսկի: Պատասխան. Ծնողները միշտ չէ որ մտավոր խնդիրներ ունեցող երեխայի տեսադաշտում են. Երեխան ավելի շատ վերահսկման կարիք ունի, քան նույն տարիքի երեխան: Որքան ավելի փոքր է երեխան, այնքան ավելի ծանր պետք է լինի վարքագիծը: Ամենադժվարը 2 տարեկանից փոքր երեխաների դեպքում է:
- Վարչաշրջանի արդարացումը. Այցելեք ծնողների վարքագծային դասընթացները: Պատասխան. Չի լուծելու որևէ բանի տակ թաքնված վարքագիծը, գնացել եք և անհաջող է եղել, կգնաք, բայց դրա կարիքը կունենաք, մինչև պարզվելը:

### Ստացողն այլևս իրավունակ չէ՞:

Վարչաշրջանի արդարացումը. Վարչաշրջանը ոչ պատշաճ կերպով է պաշտպանիչ վերահսկում տվել. Վերագնահատումից երևում է, որ իրավունակության ավարտի ոչ մի ծանուցում չկա: Պատասխան. Ոչ մի փոփոխություն SOC 293, տող H-ում, մտավոր գործունակության դասակարգումներում. Ոչ մի փոփոխություն ստացողի տան կամ ֆիզիկական վիճակի մեջ, անհապաղ բողոքարկել՝ IHSS-ը մինչև որոշումը պահելու համար: Սույն ձևաթուղթն առկա է Ձեր IHSS ֆայլում: Դուք կարող եք վարչաշրջանին խնդրել սույն ձևաթղթի պատճենը տրամադրել Ձեզ:

Պաշտպանիչ վերահսկման մասին հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այն ստանալու հուշումների մասին տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք կարդալ Պաշտպանիչ վերահսկողությանը վերաբերող մեր հրապարակումն այստեղ՝ <https://www.disabilityrightsca.org/publications/in-home-supportive-services-protective-supervision>

## **Հոգեբուժական խնդիրներ ունեցող անձինք կարո՞ղ են IHSS ստանալ:**

Այո: IHSS-ը պարզապես ֆիզիկական կամ զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց համար չէ: Եթե Դուք հոգեբուժական հաշմանդամություն ունեք, հնարավոր է, որ իրավունք ունենաք դրանցից օգտվելու, եթե օգնության կարիք ունեք Ձեր կամ մեկ ուրիշի տանը ապրելու համար: «Տունը» կարող է ներառել բնակարան, որը Դուք կիսում եք այլ անձանց հետ, կամ



հյուրանոցի սենյակ: Դուք իրավունակ չեք IHSS կամ անձնական խնամքի ծառայություններ ստանալու, եթե ապրում եք տուն-ինտերնատում կամ հոգեբուժարանում: Սակայն, այս ծառայությունները կարող են օգնել Ձեզ տուն-ինտերնատից տեղափոխվել Ձեր սեփական բնակարան կամ հյուրանոցի սենյակ:

Ահա մի քանի պատճառներ, որոնց համար Դուք կարող եք IHSS-ի կարիք ունենալ, որպեսզի ապրեք Ձեր սեփական տանը կամ բարեկամի կամ ընկերոջ տանը.

- Դուք «հուշումների» կարիք ունեք՝ առավոտյան արթնանալու և առաջադրանքները կատարելու, օրինակ՝ լոգանք ընդունելու, Ձեր խնամքով զբաղվելու, հագնվելու, դեղամիջոցներ ընդունելու, ուտելու: Զերթանկանությամբ տրվող հուշումները և աջակցությունը պայմաններ են՝ նկարագրելու այն օգնությունը, որի կարիքն ունեն մարդիկ՝ առաջադրանքն սկսելու և շարունակելու մեկ քայլից մյուսը: Ձեր հաշմանդամության կամ դեղամիջոցի կողմնակի ազդեցության պատճառով հնարավոր է, որ Դուք չկարողանաք դա կատարել՝ առանց մեկի ներկայության, ով Ձեզ կուղղորդի գործընթացի ընթացքում:
- Նույն ձևով, դուք հուշումների» կարիք կունենաք՝ օգնելու Ձեզ կատարել առաջադրանքները, ինչը կհանգեցնի գիշերը անկողին մտնելուն:
- Ճաշերի պատրաստում, որը անձը կարող է ի վիճակի չլինել հետևողականորեն և ապահով կերպով միայնակ կատարել:
- Զիջեցումներ՝ ուտելու և ջուր խմելու համար:
- Գնումներ, մաքրություն, լվացք և ճաշացանկի պլանավորում:
- Վերահսկման և միջամտության կարիք՝ որպես «պաշտպանիչ վերահսկում», որովհետև Դուք կարող եք անվնաս, հաճելի իրավիճակը տեսնել, որն անձնապես սպառնացող է և մեկ այլ, որը կարծում եք, որ արձագանքի կարիք ունի, որը կարող է ինքնավնասվածք պատճառել: Նման դեպքում հնարավոր է, որ կարիք լինի, որպեսզի Ձեր ուշադրությունը շեղեք կամ վերկառավարեք՝ օգնելու պարզել, թե արդյոք սպառնալիք չկա կամ գործողություն կատարեք՝ վնասվածքը կանխելու համար:

Վարչաշրջանի այն աշխատկիցները, ովքեր IHSS-ի համար դիմումներն են մշակում, մեծամասամբ աշխատում են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց հետ (մարդիկ, ովքեր սայլակ են օգտագործում կամ չեն կարող որոշ բաներ անել՝ ծանր արթրիտի պատճառով) կամ ճանաչողական հաշմանդամություն ունեցող անձինք (ովքեր մտավոր հաշմանդամություն կամ դեմենցիա ունեն): Նրանք վարժված չեն հոգեբուժական խնդիրներ ունեցող

անձանց դիմումների հետ աշխատելու: Դա նշանակում է, որ վարչաշրջանի աշխատակիցն ավելի շատ աջակցության կարիք ունի Ձեզնից և այն մարդկանցից, ովքեր օգնում են Ձեզ՝ հասկանալու, թե ինչու Դուք սպասարկող անձի ինամբի օգնության կարիք ունեք Ձեր տանը: Դուք նամակի կարիք կունենաք Ձեր այցելած կլինիկայի հոգեբույժից, հոգեբանից, սոցիալական աշխատողից կամ Ձեր գործի ղեկավարից (կամ որևէ այլ մեկից, ով օգնում է Ձեզ և գիտի Ձեր կարիքները): Նամակը պետք է բացատրի՝

- Այն բաները, որոնց համար Դուք օգնության կարիք ունեք և այն, թե ինչի կարիք ունեք:
- Ինչու այդ օգնության կարիքն ունեք Ձեր հաշմանդամության պատճառով: Օրինակ՝ նրանք կարող են բացատրել, որ Ձեր դեղամիջոցները, գումարած Ձեր հաշմանդամությունը դժվարացնում են առանց օգնության ժամանակին Ձեր արթնանալը և առավոտյան մնացած քայլերը կատարելը:
- Ինչպես Ձեզ անհրաժեշտ աջակցությունը չստանալը կարող է նշանակել, որ Դուք չեք կարող շարունակել Ձեր իսկ տանը կամ հյուրանոցի սենյակում կամ բնակարանում միայնակ ապրել:
- Ինչպես Ձեզ անհրաժեշտ աջակցությունը չստանալը կարող է Ձեր առողջական խնդիրը վատթարացնել: Օրինակ՝ առանց օգնության ամեն օր արթնանալը և բնակարանը կոկիկ պահելը, Ձեր առօրյա կյանքը կարող է քառսային դարձնել և ճգնաժամի հասցնել: Ձեր կյանքում առանց օգնության կարգ ու կանոն տրամադրելու, Դուք ճգնաժամի վտանգի կմատնվեք, որը նույնիսկ կարող է նշանակել շտապ բուժօգնության բաժանմունք այցելություն:

## **Երեխաները կարո՞ղ են IHSS ստանալ:**

Այո: Երեխաները կարող են ստանալ հետևյալը՝

- Անձնական ինամբի ծառայություններ (լողացնել, զուգարանից օգտվել, հագնվել, կերակրել, աջակցություն շարժվելու հարցում և այլն):
- Առնչվող ծառայություններ (ճաշի պատրաստում, պլանավորում և մաքրություն, լվացք, սննդի գնումներ):
- Պարամեդիկ ծառայություններ (եթե նշանակված է բժշկի կողմից՝ ներարկումներ, կատետրներ, խողովակով սնուցում, ներծծում):
- Պաշտպանիչ վերահսկում (24-ժամյա մշտադիտարկում և վերահսկում վնասվածքը կանխելու համար)
  - Երեխայի ոչ սովորական ինամբ կամ վերահսկում

- Պետք է ցույց տալ տարբերությունը նույն տարիքի հաշմանդամ և այլ երեխայի միջև:
- Երեխաները չեն կարող տնային ծառայություններ ստանալ

## **Իմ ծնողը կարո՞ղ է իմ մատակարարը լինել:**

Այո: Եթե Դուք չափահաս եք, Դուք կարող եք առանց սահմանափակումների ծնող մատակարար ունենալ:

## **Անչափահաս երեխայի ծնողը կարո՞ղ է IHSS մատակարար լինել:**

Եթե Դուք անչափահաս երեխա ունեք, որը IHSS է ստանում, Դուք կարող եք ծնող մատակարար լինել, եթե՝

- Դուք թողնեք Ձեր աշխատանքը կամ չկարողանաք աշխատանք գտնել , որովհետև պետք է ինամեք Ձեր երեխային, և
- Ոչ մի այլ հարմար ինամեք տրամադրող մատչելի չէ (պատրաստակամ կամ ի վիճակի եղող), և
- Ձեր երեխան վտանգված է տանից դուրս հաստատությունում տեղավորվելու կամ անհամապատասխան ինամեք ստանալու:

Եթե երկու ծնողն էլ ապրում են տանը, մեկ ծնողը կարող է վճարվել, մինչ մյուս ծնողն աշխատում է, սովորում է, քնած է կամ հաշմանդամ է: Ձեր երեխան նաև կարող է շաբաթական 8 ժամ փոխարինում ստանալ (ծնող չեղող մատակարարից), երբ դուք գնումներ եք կատարում, փոքր հանձնարարություններ ունեք կամ ընտանիքի հետ կապված այլ գործեր ունեք:

Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս՝ «Ծնողների հետ ապրող անչափահաս ստացողներին վերաբերող կանոնակարգերի պարզաբանում» ACL 19-02 (հունվարի 9, 2019թ.) այստեղ՝

<http://www.cdss.ca.gov/inforesources/2019-All-County-Letters>

Հնարավոր է, որ Դուք ցանկանաք վերանայել ACL 15-45-ը, որը «Հարցեր և պատասխաններ ծնող(ներ)ի հետ ապրող անչափահասների մասին» հրապարակումը՝

<http://www.cdss.ca.gov/lettersnotices/EntRes/getinfo/acl/2015/15-45.pdf>.

## **Ի՞նչ պետք է անեմ IHSS ծնող մատակարարի մերժման դեպքում:**

Ծնողն իրավունա՞կ է որպես մատակարար (ի վիճակի և մատչելի է):

Վարչաշրջանի արդարացումը. Ծնողը կարող է մեկ դրույքով աշխատել (շաբաթական 40 ժամ)՝ երեխային մեկ այլ դպրոցի ցերեկային խնամքի կենտրոն դնելով: Պատասխան. Անհարմար խնամքի կենտրոն, չի կարող նվազագույն աշխատավրձով դայակ վարձել, երեխան հատուկ խրախուսման կարիք ունի ծնողի կողմից:

Վարչաշրջանի արդարացումը. Ծնողը 40 ժամից պակաս է աշխատում, բայց կարող է մեկ դրույքով աշխատել: Պատասխան. Հաճախակի այցելություններ բժշկին, այլ արտակարգ իրավիճակներ կամ սթրեսը կանխարգելում են մեկ դրույքով աշխատանքը, կորցրել է նախկին մեկ դրույքով աշխատանքը:

## **Ծնողի IHSS եկամուտները կարո՞ղ են ազդել անչափահաս երեխայի SSI նպաստների վրա:**

IHSS այն եկամուտները, որոնք տրվում են IHSS մատակարար ծնողին, չեն ազդի երեխայի SSI վճարման գումարի չափի վրա: Սակայն, այլ եկամուտները, որոնք ծնողն ստանում է, կարող է ազդել երեխայի SSI վճարման գումարի չափի վրա:

## **Ես կարո՞ղ եմ IHSS ստանալ և շարունակել փոխարինում ստանալ տարածաշրջանային կենտրոնից:**

Այո: Տարածաշրջանային կենտրոնից ստացվող փոխարինման ծառայությունները տարբերվում են IHSS-ից: Դուք պետք է ի վիճակի լինեք IHSS ստանալ, այդ թվում՝ պաշտպանիչ վերահսկում՝ առանց կորցնելու փոխարինման որևէ ժամ: Չանգահարեք Disability Rights California, եթե տարածաշրջանային կենտրոնը փորձում է կրճատել Ձեր փոխարինման ժամերը, քանի որ Դուք IHSS եք ստանում:

## **Իմ ամուսինը/կինը կարո՞ղ է իմ մատակարարը լինել:**

Այո: Ոչ-բժշկական անձնական ծառայությունների (տե՛ս հարցաթերթիկի ձևաթղթի 4-րդ դասակարգումը) և պարամեդիկ ծառայությունների համար ձեր ամուսինը/կինը կամ որևէ այլ մեկը կարող է վճարվող IHSS մատակարար

դառնալ: Պաշտպանիչ վերահսկման համար Ձեր ամուսինը/կինը կարող է Ձեր մատակարարը լինել, եթե՝

- Ձեր ամուսինը/կինը լքի մեկ դրույքով աշխատանքը. կամ
- Մեկ դրույքով աշխատանք ձեռք բերելուց հրաժարվի, որովհետև ավելի հարմար մատակարար մատչելի չէ. և
- արդյունքում ոչ պատշաճ, տանից դուրս տեղադրման կամ անհամապատասխան խնամքի վտանգ կա:

Եթե Ձեր կինը/ամուսինը ի վիճակի կամ մատչելի չէ, այս և այլ IHSS ծառայությունները կարող են այլոց կողմից տրամադրվել: «Մատչելի չէ» տարբերակը ներառում է այն ժամը, երբ ամուսինը/կինը տանից դուրս է՝ աշխատանքի կամ այլ անհրաժեշտ պատճառներով, կամ երբ ամուսինը/կինը քնած է կամ բավարարում է ընտանիքի այլ անդամների կարիքները:

## **Ինչպե՞ս կարող եմ ամսական 283 առավելագույն քանակով IHSS ժամ ստանալ:**

Դուք պետք է «ծանր խնդիրներ» ունենաք և պաշտպանիչ վերահսկում ստանաք կամ պետք է ամսական առնվազն 283 ժամ IHSS ծառայություններ ստանաք (չի ներառում պաշտպանիչ վերահսկումը): Որոշելու, թե արդյոք Դուք իրավունք ունեք «ծանր խնդիրներ» ունեցող ստացող համարվել, ավելացրեք «կարևոր» ծառայության դասակարգումները, որոնք աստղանիշով (\*) պիտակավորված են հարցաթերթիկի 2-րդ մասում: Եթե դրանք շաբաթական 20 կամ ավելի ժամ են կազմում, ապա դուք կորակավորվեք որպես ծանր խնդիրներ ունեցող:

Եթե դուք պաշտպանիչ վերահսկման համար իրավունակ լինեք, Դուք 283 ժամ կստանաք, եթե «ծանր խնդիրներ» ունեցող լինեք: Եթե պաշտպանիչ վերահսկման համար իրավունակ չլինեք, ապա 283 ժամ կստանաք, եթե Ձեր խնամքը ընդհանուր առմամբ այս քանակությամբ ժամերի կարիք ունի:

Եթե իրավունակ եք պաշտպանիչ վերահսկման համար, ապա Ձեր ժամերն ամսական առնվազն 195 կլինեն, եթե ծանր խնդիրներ ունեցող չեք: Ժամերի ընդհանուր քանակը, որը Դուք կստանաք, կախված կլինի վարչաշրջանի գնահատումից և նրանից, թե IHSS-ի որ ծրագրում եք ներառված: Եթե հարցեր ունեք առ այն, թե IHSS-ի որ ծրագրում եք, նախ խոսեք Ձեր վարչաշրջանի աշխատակցի հետ: Եթե վարչաշրջանի աշխատակցի հետ խոսելուց հետո մտահոգություններ կամ հարցեր ունեք, կարող եք

զանգահարել DRC-ի ընդհանուր հեռախոսագծին՝ 1-800-776-5746  
հեռախոսահամարով:

Եթե համաձայն չեք IHSS ժամերի հետ, պետք է բողոքարկեք և արդար լսում  
խնդրեք:

### **Ե՞րբ պետք է լսում խնդրեմ:**

Եթե վարչաշրջանը կրճատի Ձեր ժամերը կամ ավարտի Ձեր IHSS-ը, Դուք  
պետք է արդար լսում խնդրեք՝ նախքան Ձեր IHSS NOA-ի կրճատումն ուժի  
մեջ մտնի: Եթե լսում խնդրեք՝ նախքան IHSS NOA-ի ակնկալվող  
փոփոխությունը, Դուք կշարունակեք Ձեր բոլոր ժամերն ստանալ մինչև որ  
լսումն ավարտվի: Ձեր IHSS NOA-ի առաջին էջում նշված կլինի, թե երբ IHSS  
NOA-ն ուժի մեջ կմտնի: Եթե Դուք IHSS NOA չստանաք կամ Ձեր NOA-ն ուժի  
մեջ մտնի այն ստանալուց հետո 10 օրից ավելի քիչ ժամկետում, Դուք պետք է  
անհապաղ լսում և վճարովի օգնության առկախում խնդրեք: Երբ լսում  
խնդրեք, Դուք պետք է բացատրեք, որ չեք ստացել IHSS NOA-ն կամ ուշ եք  
ստացել IHSS NOA-ն: Եթե վարչաշրջանը մերժել է հավելյալ ժամաքանակի  
համար արված Ձեր IHSS դիմումը կամ խնդրանքը, Դուք պետք է բողոքարկեք  
90 օրվա ընթացքում:

### **Ինչպե՞ս պետք է դիմում խնդրեմ:**

Դուք կարող եք առցանց, հեռախոսով, փոստով կամ ֆաքսով լսում խնդրել:

[Սեղմեք այստեղ՝ առցանց լսում խնդրելու համար](#)

#### **Ջեռախոսով լսում խնդրեք՝**

Չանգահարեք նահանգային լսումների վարչության անվճար  
հեռախոսահամարներով՝  
(800) 743-8525 կամ (855) 795-0634

Չանրային հարցաքննումների և պատասխանների բաժնի անվճար  
հեռախոսահամարներով՝  
(800) 952-5253 կամ TDD (800) 952-8349

#### **Գրավոր ձևով լսում խնդրեք՝**

Ձեր խնդրանքը ներկայացրեք վարչաշրջանի բարեկեցության բաժնին՝ ծանուցման ուղարկած հասցեով կամ հետևյալ փոստային հասցեով՝

California Department of Social Services  
State Hearings Division  
P.O. Box 944243, Mail Station 9-17-37  
Sacramento, California 94244-2430

### **Ֆաքսով լսում խնդրեք հետևյալ համարով՝ (833) 281-0905**

Եթե բանավոր թարգմանչի կարիք ունեք կամ բանավոր թարգմանչի կարիք ունեք մեկ այլ անձի համար, ով վկայություն պետք է տա (օրինակ՝ IHSS մատակարարը), դա ներառեք Ձեր խնդրանքում: Լսման գործընթացի մասին հավելյալ տեղեկությունների համար սեղմեք այստեղ՝ այցելելու [նահանգային լսումների բաժնի կայքէջը](#).

### **Ինչպե՞ս կարող եմ իմ լսման համար տեղեկություններ ստանալ:**

Տեղեկություններ հավաքեք առ այն, թե ինչպես է վարչաշրջանի IHSS աշխատակիցը որոշել Ձեզ լիազորված ժամերը:

- Պայմանավորվածություն ձեռք բերեք այցելելու Ձեր IHSS գրասենյակ՝ վերանայելու Ձեր IHSS գործի ֆայլը:
- Ձեր աշխատակցից «կարիքների գնահատման» ամենավերջին տարբերակի ձևաթղթի պատճենը խնդրեք: Վարչաշրջանի այս ձևաթղթերը նշումներ կներառեն այն այն, թե ժամերն ինչու են տրվել կամ ինչու չեն տրվել: Նաև ամենավերջին SOC 293 ձևաթղթի պատճենը խնդրեք: SOC 293 ձևաթղթերը տեղեկություններ են ներառում գործունակության դասակարգման վերաբերյալ, այսինքն ինչ կարող եք և չեք կարող անել: Եթե պայքարում եք կրճատման դեմ, խնդրեք վարչաշրջանի Ձեր գնահատման և՛ նոր և՛ հին ձևաթղթերի պատճենները, ինչպես նաև Ձեր նոր և հին SOC 293 ձևաթղթերը:
- Խնդրեք Ձեր ֆայլի այն էջերի պատճենները, որտեղ նշումներ են կատարվել կոնտակտների և Ձեր այցելությունների մասին անցյալ տարվա ընթացքում:
- Վարչաշրջանի ժամային առաջադրանքների ուղեցույցների պատճենը խնդրեք:

- Ձեր ֆայլի ցանկացած բժշկի կամ բժշկական գեկույցի, ինչպես նաև պարամեդիկ որևէ ձևաթղթի պատճենները խնդրեք:
- Եթե IHSS-ը նվազեցրել է Ձեր ժամերը, Ձեր աշխատակցից խնդրեք այն կանոնակարգումների պատճենները, որոնք նշված են կրճատման Ձեր ծանուցման մեջ:

## **Ի՞նչ տեղի կունենա, եթե վարչաշրջանի աշխատակիցը ինձ պատճեններ չտրամադրի իմ ֆայլից:**

Աշխատակցին ասացեք, որ Դուք իրավունք ունեք հետաքննել Ձեր ֆայլը, որը նաև կարող է նշանակել, որ վարչաշրջանը Ձեզ փաստաթղթերի պատճեններ է տրամադրում: Դուք կարող եք աշխատակցին [ACL 18-52-ի պատճենը տալ](#), որը կոչվում է «Տնային աջակցող ծառայությունների գործի արձանագրությունների հրապարակում դիմորդին/ստացողին կամ լիազորված ներկայացուցչին» (մայիսի 9, 2018թ.): Այս նամակում առկա են Ձեր ֆայլին վերաբերող օրենքները և կանոնակարգումները, ինչպես նաև վարչաշրջաններին վերաբերող ցուցումներ:

## **Որտե՞ղ կարող եմ IHSS-ին վերաբերող օրենքներ գտնել:**

IHSS կանոնակարգումները գտնվում են Սոցիալական ծառայությունների վարչության քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկի 30-րդ բաժնում: [Սեղմեք այստեղ՝ IHSS կանոնակարգումների համար](#): 30-րդ բաժնի կանոնակարգումների համար 4 գրառում գոյություն ունի: Առաջին գրառումը բաց թողեք: IHSS կանոնակարգերն սկսվում են 2-րդ գրառման մորտավորապես 5-րդ էջից, շարունակվում են մինչև 3-րդ գրառումը և ավարտվում են 4-րդ գրառմանը:

«All-county letters»-ը հրահանգներ են, որոնք Սոցիալական ծառայությունների վարչությունն ուղարկում է վարչաշրջաններին: Նամակները շատ ծրագրեր են ընդգրկում: Ընդամենը մի քանիսն են IHSS-ի մասին: [Սեղմեք այստեղ՝ All-County Letters-ի համար՝](#)

«All-county information notices»-ը հայտարարություններ են, որոնք Սոցիալական ծառայությունների վարչությունն ուղարկում է վարչաշրջաններին: Ծանուցումները շատ ծրագրեր են ընդգրկում: Ընդամենը մի քանիսն են IHSS-ի մասին: [Սեղմեք այստեղ՝ «All-County Information Notices»-ի համար](#).



## **Ի՞նչ տեղի կունենա լսման համար դիմելուց հետո:**

Բողոքը ներկայացնելուց հետո նահանգը Ձեզ տեղեկություններ կուղարկի լսման իրավունքների մասին: Տեղեկությունները կներառեն վարչաշրջանի բողոքների հարցերով աշխատակցի անունը և կոնտակտային տվյալները: Վարչաշրջանի բողոքների հարցերով աշխատակիցն այն անձն է, ով վարչաշրջանը կներկայացնի լսման ժամանակ: Ձեր IHSS ֆայլը կարող է այդ գրասենյակում լինել: Բողոքների հարցերով շատ աշխատակիցներ փորձում են տարածայնությունն առանց լսման լուծել: Բողոքների հարցերով աշխատակիցները հաճախ ավելի փորձառու և տեղեկացված են, քան այն մարդիկ, ում հետ Դուք առնչվում եք IHSS գրասենյակում:

Բողոքների հարցերով աշխատակիցը կարող է զանգահարել Ձեզ «պայմանական ետկանչի» մասին, որպեսզի նոր գնահատում հնարավոր լինի կատարել: Եթե Դուք համաձայնեք Ձեր լսման խնդրանքի (բողոքի) պայմանական ետկանչին, ապա կարիք չկա, որ դուք գնաք Ձեր լսմանը: Վարչաշրջանը ստիպված կլինի ինչ-որ բան անել (օրինակ՝ նոր գնահատում կատարել), որը լսումից առաջացած Ձեր ետկանչի վիճակը կլինի: Վարչաշրջանը սա կանի՝ Ձեզ տալով մի փաստաթուղթ, որը կոչվում է պայմանական ետկանչի ձևաթուղթ: Դուք պետք է հաստատեք, որ ստացել, վերանայել, հասկացել և համաձայն եք Ձեր պայմանական ետկանչի ձևաթղթին՝ նախքան կստորագրեք (կհամաձայնեք) լսման Ձեր խնդրանքը հետ վերցնելու: Շատ վարչաշրջաններ կհամաձայնեն Ձեր պայմանական ետկանչի փաստաթղթերը էլեկտրոնային փոստով տրամադրել, եթե խնդրեք: Դուք կարող եք կրկին լսում պլանավորել, եթե չհամաձայնեք նոր գնահատման հետ կամ եթե վարչաշրջանը հետդարձի նպաստներ չլիազորի:

## **Ես կարո՞ղ եմ վարչաշրջանի վկայության պատճենն ստանալ նախքան լսումը:**

Այո: Դուք իրավունք ունեք վարչաշրջանի դիրքորոշման մասին տեղյակ լինել լսումից առնվազն 2 աշխատանքային օր առաջ: Օրինակ՝ եթե Ձեր լսումն ուրբաթ օրն է, ապա Դուք իրավունք ունեք դիրքորոշման մասին տեղեկանալ չորեքշաբթի առավոտյան: Կանոններում չկա նման բան, որ արգելի վարչաշրջանին դա ձեզ ավելի վաղ տրամադրել, եթե այն առկա է: Դուք նաև կարող եք ցանկացած պահի նայել Ձեր ֆայլը՝ անկախ նրանից, թե Դուք առկախ լսում ունեք, թե ոչ, ինչպես նշվեց վերևում: Վարչաշրջանի դիրքորոշումը կօգնի Ձեզ պարզել այլ փաստերը և վկայությունները, որոնց կարիքն ունեք: Եթե դուք նախքան լսումը պատճեն չստանաք, կարող եք խնդրել, որպեսզի «արձանագրությունը բաց մնա»՝ լրացուցիչ փաստեր

Ներկայացնելու համար (ինչպիսիք են նամակները կամ հայտարարությունները)՝ պատասխանելու վարչաշրջանը դիրքորոշման ցանկացած կետի: Նույնիսկ եթե Դուք ժամանակին ստանաք վարչաշրջանի դիրքորոշումը, Դուք դեռ կարող եք խնդրել, որպեսզի լսման արձանագրությունը բաց մնա, որպեսզի կարողանաք ավելի շատ փաստեր ներկայացնել:

## **Ի՞նչ է տեղի ունենում լսմանը:**

Վարչաշրջանն առաջինն է սկսում և ասում է, թե ինչու են Ձեր ժամերը կրճատվել կամ ինչու չպետք է լրացուցիչ ժամեր ունենաք, որոնց կարիքը Ձեր կարծիքով ունեք: Եթե վարչաշրջանը կրճատել է Ձեր ժամերը կամ ծառայությունը (օրինակ՝ պաշտպանիչ վերահսկումը), ապա վարչաշրջանն այդ բեռն իր վրա է վերցնում՝ ցույց տալու, թե ինչպես եք ապաքինվել կամ ինչպես են փոխվել կյանքի հանգամանքները, որը նշանակում է, որ Դուք ավելի քիչ ժամերի կարիք ունեք:

Դուք և վարչաշրջանը կարող եք փաստեր ներկայացնել (ցուցմունքներ վկաների կողմից, նամակներ, օրագրի մատյան, բժշկական հաշվետվություններ) յուրաքանչյուր ծառայության դասակարգման ոլորտի Ձեր կարիքների մասին, որտեղ դուք և վարչաշրջանը չեք համաձայնվում: Ձեր փաստերը պետք է բացատրեն՝

- Ինչ ծառայությունների կարիք ունեք
- Որքան է տևում ծառայություններ տրամադրելը
- Պատճառը, որ Դուք ավելի շատ ժամերի կարիք ունեք, քան սահմանված է գնահատման մեջ կամ ուղեցույցերում, և
- Ինչ վտանգների կարող եք ենթարկվել, եթե ծառայությունների այդ մակարդակը չստանաք:

IHSS-ի արդար լսումները ոչ պաշտոնական են: Դուք նստում եք սեղանի մոտ, այլ ոչ թե դատարանի դահլիճում: Ամենակարևոր բանն է բացատրել, թե ինչու ավելի շատ ժամերի կարիք կա: Լավագույն վկայությունն այն մարդկանց կողմից է, ովքեր Ձեզ ինամբ են տրամադրում և այդ ինամբի համար անհրաժեշտ ժամերի օրագրի արձանագրություն են պահում: Վկաները կարող են ներառել Ձեզ, անցյալի և ներկայիս IHSS մատակարարները, տարածաշրջանային կենտրոնի խորհրդատուն, ընկերները, ընտանիքի անդամները և որևէ այլ մեկը, որը դատավորներին անհրաժեշտ տեղեկություններ ունի: Յուրաքանչյուր վկայի համար, նշեք այն կետերը,

որոնք ցանկանում եք, որ վկաներն արժարժեն և ջնջեք, երբ դրանց մասին խոսվի:

## **Ինչպե՞ս կարող եմ իմ լսման համար օգնություն ստանալ:**

Մեր հրապարակումը, որը կոչվում է «Պատրաստվեք լսմանը՝ IHSS ընդհատումները կամ կրճատումները ժամերով» ([սեղմեք այստեղ](#)), լսումների ժամանակ շահերի պաշտպանությանը վերաբերող տեղեկություններ է պարունակում: Այն նաև 2 ձևաթուղթ ունի, որը Դուք կարիք կունենաք օգտագործել.

1. Ձևաթուղթ՝ Ձեր բժշկից գործունակության մակարդակների մասին բժշկական փաստաթղթեր ստանալու
2. Ձևաթուղթ՝ բացատրելու, թե ինչու Դուք ավելի շատ ժամերի կարիք ունեք, քան HTGs-ն է թույլատրում՝ ըստ Ձեր գործունակության

Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք տարածաշրջանային կենտրոն (եթե դուք տարածաշրջանային կենտրոնի սպասառու եք), անկախ ապրելակերպի կենտրոն, իրավբանական աջակցության ծրագրի, տարեցների շահերի պաշտպանության ծրագրի, Disability Rights California-ի անվճար հեռախոսահամարներով՝ (800) 776-5746, կամ Disability Rights Legal Center՝ (213) 736-1031: Պարզելու Ձեր տարածաշրջանի տարեցների շահերի պաշտպանության ծրագրի հեռախոսահամարը, զանգահարեք Ձեր վարչաշրջանի տարեցների գրասենյակ կամ տարեցների նահանգային վարչություն՝ (800) 510-2020 հեռախոսահամարով:

## Մաս 2. Ինքնագնահատման հարցաթերթիկ

(ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հետևյալ բաժինն ամբողջությամբ հասանելի չէ: Խնդրում ենք կապվել մեզ հետ, եթե այդ հարցաթերթիկներն այլ ձևաչափերով կարիք ունեք. Չանգահարեք 1-800-776-5746 հեռախոսահամարով:)

### Տնային աջակցության ծառայությունների ինքնագնահատման հարցաթերթիկ

Տնային ծառայություններ. Միայն չափահասների համար: Երեխաներն իրավունակ չեն տնային ծառայությունների ժամեր ստանալու:

Տնային ծառայությունները սովորաբար սիամանափակված են ամսական մինչև 6 ժամով՝ ըստ տնային տնտեսության և բաժանված են տան անդամների թվի քանակին: Եթե Դուք ամսական տնային ծառայությունների ավելի քան 6 ժամի կարիք ունեք ստացողի հաշմանդամության պատճառով (օրինակ՝ Լոգարանի ավելի հաճախ մաքրության կատարում՝ անմիզապահության պատճառով, փոշիների հաճախակի սրբում՝ ասթմայի պատճառով և այլն), ապա ստորև տրված սյունակներում նշեք անհարժեշտ ժամերը:

#### IHSS ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԿԻ ԵՎ ԼՐԱՑՎԻ

ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երեք.	Չոր.	Հինգ.	Ուրբ.	Շաբ.	Կիր.	ԸՆԴՀԱՆ ՈՒՐ
a. Ավելի և փոշեկուլով մաքրել								
b. Մաքրել խոհանոցի դարակները								

<b>ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>Երկ.</b>	<b>Երեք.</b>	<b>Չոր.</b>	<b>Հինգ.</b>	<b>Ուրբ.</b>	<b>Շաբ.</b>	<b>Կիր.</b>	<b>ԸՆԴՀԱՆ ՈՒՐ</b>
c. Ջեռոցը և օջախը մաքրելը								
d. Սառնարանը մաքրելը և սառույցը հալեցնելը								
e. Սնունդ և պաշարները պահեստավորելը								
f. Աղբը դուրս հանելը								
g. Փոշիները սրբելը և տունը հավաքելը								
h. Տաքացնելու կամ ճաշ պատրաստելու համար բակի վառելիքի պահեստից վառելիք բերելը, այլ								
i. Անկողիների սավանները փոխելը								
j. Այլ								
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								

Առնչվող ծառայություններ. ճաշի պատրաստում, շաճից հետո մաքրություն, ընթացիկ լվացք, գնումներ և այլ գործեր: (Երկուշաբթից կիրակի):

**IHSS-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԿԻ ԵՎ ԼՐԱՑՎԻ**

ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.			Երեք.			Չոր.			Հինգ.			Ուրբ.			Շաբ.			Կիր.			ԸՆԴՀԱՆ ՈՒՐ
	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	Ն	Ճ	Ը	
Նախաճաշ=Ն, ճաշ=Ճ, Ընթրիք=Ը																						
<b>a.</b> Ճաշերի պատրաստում, ճաշերի մատուցում, սննդի կտրատում*																						
<b>b.</b> Սննդից հետո մաքրություն և ճաշացանկի պլանավորում**																						
<b>c.</b> Լվացք, կարկատում, արդուկ, տեսակավորում, ծալում և դասավորում (Սովորաբար շաբաթական 60 րոպե տանը, շաբաթական 90 րոպե՝ տանից դուրս)***																						

<b>ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>Երկ.</b>	<b>Երեք.</b>	<b>Չոր.</b>	<b>Հինգ.</b>	<b>Ուրբ.</b>	<b>Շաբ.</b>	<b>Կիր.</b>	<b>ԸՆԴՀԱՆ ՈՒՐ</b>
<b>d. Այլ գնումներ / գործեր</b> (Սովորաբար շաբաթական առավելագույնը 30 թույլե)***								
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								

**IHSS-ի ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԿԻ ԵՎ ԼՐԱՅՎԻ**

<b>ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>Երկ.</b>	<b>Երեք.</b>	<b>Չոր.</b>	<b>Հինգ.</b>	<b>Ուրբ.</b>	<b>Շաբ.</b>	<b>Կիր.</b>	<b>ԸՆԴՀԱՆ ՈՒՐ</b>
<u>ՄԵԾ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ</u>								
<u>ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>								
a. Շնչառություն*								
b. Աղիքների/ միզապարկի խնամք (այդ թվում օգնություն աթոռակ-գուգարանին նստելիս/վեր կենալիս)*								
c. Ուտելը և ըմպելը*								
d. Վաննայի մեջ լողնաք ընդունելը*								
e. Հագնվել*								
f. Դաշտանային խնամք*								
g. Շարժվելու ընդունակություն*								
h. Անկողին մտնելը և անկողնուց դուրս գալը*								



ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Երկ.	Երեք.	Չոր.	Հինգ.	Ուրբ.	Շաբ.	Կիր.	ԸՆԴՀԱՆ ՈՒՐ
i. Հարդարվելը, լոգանք ընդունելը, մազերի խնամքը, ատամները և մատների եղունակները*								
j. Մաշկը տրորելը՝ խթանելու արյան շրջանառության, անկողին մտնելը, սայլակի վրա դիրքը փոխելը, օգնություն սայլակին նստելիս և սայլկից վեր կենալիս*								
k. Պրոթեզների խնամք և աջակցություն*								
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								

**IHSS ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԿԻ ԵՎ ԼՐԱՑՎԻ**

<b>ՓՈՒՆԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>Երկ</b> .	<b>Երեք</b> .	<b>Չոր</b> .	<b>Հինգ</b> .	<b>Ուրբ</b> .	<b>Շաբ</b> .	<b>Կիր</b> .	<b>ԸՆԴՀԱՆՈՒ Ր</b>
<b>Բժշկական փոխադրում</b>								
a. Բժշկական պայմանավորվածություններին***								
b. Այլընտրանքային ռեսուրսներ								
<b>ԲԱԿԻ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԱՑՈՒՄ</b>								
<b>ՊԱՇՏՊԱՆԻՉ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ</b>								
<b><u>ՊԱՐԱՄԵԴԻԿ</u> <u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></b>  (այսինքն՝ կատետրի տեղադրում, ներարկումներ, շարժման սահմանի վարժություններ և այլն մանրամասնել)								
<b><u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ</u> <u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></b>  (Ամեն ինչ, բացի տնային ծառայություններից)								

Բազմապատկել 4.33-ով ամսական ընդհանուր թիվն ստանալու համար									
Գումարած տնային ծառայություններ  (ամսական առավելագույնը 6 ժամ, եթե ավելի շատ ժամերի կարիք չկա, կարող է ցուցադրվել վերոնշյալ էջ 1-ում)									
<b>ԱՄՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>									

\* Եթե աստղանիշով նշված ժամերը հավասարն են շաբաթական 20-ի կամ ավելի են, ապա ստացողը համարվում է «ծանր խնդիրներ» ունեցող:

\*\* Ճաշից հետո մաքրության ժամերը ներառված են՝ որոշելու, թե արդյոք ծանր խնդիրներ ունի, եթե IHSS աջակցության կարիք կա ճաշը պատրաստելու և այն ուտելու հարցում:

\*\*\* IHSS-ը կվճարի փոխադրման ժամանակի համար՝ Ձեզ տանից վերցնելու և տանելու մինչև բժշկական պայմանավորվածության վայր, ինչպես նաև սպասման ժամերի համար: Բժշկական պայմանավորվածությանը սպասելու համար վճարվելու համար, մատակարարը պետք է ցույց տա, որ երբ նա ստացողի բժշկական պայմանավորվածությանն է, նա չի կարող լքել, որովհետև չի կարող կանխագուշակել, թե որքան կտևի ստացողի պայմանավորվածությունը: Բժշկական

պայմանավորվածություն և այնտեղից տուն փոխադրման մասին հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այս պայմանավորվածություններին մատակարարի սպասման ժամերի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս մեր «IHS մատակարարի սպասման և ճամփորդության ժամերը» հրապարակումը, որն առցանց մատչելի է: [DRC հրապ.՝ # 5607.01](#).

# Մաս 3. Գործունեք կամ պատճառներ հնչու ավելի շատ IHSS ժամերի կարիք կա

## Տնային ծառայություններ

Նահանգային կանոնակարգերը սովորաբար ամսական ընդամենը 6 ժամ են թույլ տալիս տնային ծառայությունների համար՝ ըստ յուրաքանչյուր տնային տնտեսության: Երբ կանոնակարգերը թողարկվեցին, նահանգը բացատրեց, որ ամսական 6 ժամը հիմնված էր ամսական երկու անգամ տնային ծառայություններ ստանալու վրա:

Եթե 4 անձ ապրում է մի տանը, ապա ստացողի համար թույլատրված ընդհանուր IHSS ժամը 1,5 ժամ կլինի յուրաքանչյուր ամիս: Եթե ստացողի սենյակակիցն այնտեղ լոկ որպես այցելու է ապրում, ապա տնային ծառայությունները չպետք է նախապես համաչափ տրամադրվեն:

Վարչաշրջանը կարող է նախապես ժամերը համաչափ տրամադրել միայն տան ընդհանուր տարածքների համար. Ձեր սեփական սենյակը կամ լոգարանը պետք է առանձին լիազորվեն: Եթե տնային ծառայությունների համար հավելյալ ժամանակի կարիք ունեք՝ տանն ապահով մնալու համար, ապա վարչաշրջանը պետք է ամսական 6 ժամվա ուղեցույցների բացառություն թույլատրի: Օրինակ՝

- Ալերգիան կամ շնչառական խնդիրները ցույց են տալիս, որ փոշուց զերծ միջավայրի կարիք կա, ինչպես նաև՝ հաճախ փոշիները մաքրելու և փոշեկուլով մաքրելու կարիք կա:
- Աղբը պետք է ամեն օր դուրս դրվի կամ ավելի քան ամիսը երկու անգամ, մանրածածանի կամ այլ մակաբույծերի խնդիրների պատճառով:
- Եթե Դուք թափում եք իրերը, հաճախակի մաքրման կարիք կա, հատկապես եթե մանրածածանի կամ մակաբույծերի խնդիրներ կան:
- Անմիզապահությունը հանգեցնում է հատակի, կահույքի և այլնի հաճախակի մաքրման:
- Աղբամանը դրված է երկու կրկնակի կողպված դռների արանքում՝ շենքի հետևում, և 10 րոպե է անհրաժեշտ այնտեղ գնալու և վերադառնալու համար:
- Եթե Դուք ուտում եք անկողնու մեջ, անկողնինը պետք է փոշեկուլով մաքրվի և վերադասավորվի օրը 3 անգամ՝ փշրանքները հեռացնելու համար: Անկողնու սավանները պետք է ավելի հաճախ փոխվեն՝ թափվածների պատճառով:

- Եթե դուք ունեք անմիզապահություն/դեպքեր, անկողնու սավանները պետք է ավելի հաճախ փոխվեն, քան ամսական երկու անգամ (օրական, շաբաթական երեք անգամ, շաբաթը մեկ անգամ և այլն):
- Մաշկի գերզգայունության և անկողնային վերքերի վտանգի կամ պառնկելախոցի պատճառով, սավանները պետք է սահուն լինեն՝ տաք կետերի առաջացումը կանխելու համար. Պետք է վստահ լինել, որ անկողնու մեջ ոչ մի բան չքերի կամ չգրգռի մաշկը:
- Քանի որ Դուք ինչ-որ բաներ եք թափում, ավելի շատ հավաքելու կարիք կլինի:
- Քանի որ սառնարանի դուռը մաշվել է, ավելի շատ է անհրաժեշտ մաքրել և հալեցնել սառնարանի սառույցները:
- Քանի որ Դուք ժամանակի մեծ մասն անցկացնում եք անկողնում կամ քրտնելու պատճառով սավանները պետք է ամսական երկու անգամից ավելի հաճախ փոխել:
- Ողջ շենքով մեկ մակաբույծերի համար հեղուկ կյուլթերով ցողացրում է պահանջվում. Պետք է ամեն ինչ հանվի խոհանոցից, դարակները պետք է լվացվեն, իսկ ցողացրումից հետո կրկին տեղադրվեն: (Այս ամենի համար ժամերն արդարացված են ոչ մի առողջության և անվտանգության պատճառներով, այլ նաև անկախ ապրելակերպի իրավիճակ հաստատելու և պահպանելու համար, քանի որ դրան չհամապատասխանելը կարող է Ձեզ վտարման վտանգի առաջ կանգնեցնել):

## Անձնական խնամքի ծառայություններ

Անձնական խնամքի ծառայությունները պետք է անհատապես գնահատվեն: Համոզվեք, որ հաշվել եք ողջ առաջադրանքի համար պահանջվող ժամանակը՝ սկզբից մինչև վերջ: Եթե անձնական խնամքի համար ավելի շատ ժամանակի կարիք ունեք՝ տանն ապահով մնալու համար, վարչաշրջանը պետք է ուղեցույցների բացառություն թույլ տա: Օրինակ՝

- Լոգարանն անհարմար է սայլակի համար: Սա նշանակում է, որ լրացուցիչ ժամանակ է պահանջվում լոգանք ընդունելու և այլ անձնական խնամքի/հարդարման գործողությունների համար:
- Լոգարանում պատահարները կանխելու համար լրացուցիչ մաքրություն է պահանջվում աղիքների և միզապարկի խնամքի համար:
- Դուք զգայուն եք ցավի հանդեպ, նույնիսկ մազ սանրելը ցավ է պատճառում: Անձնական խնամքի ծառայությունները պետք է դանդաղ և ուշադիր կատարվեն:
- Դուք կամաց եք ուտում և ծամում, Ձեզ պետք է համոզել կամ Ձեր ծնոտը պետք է ձեռքով գործածվի: Յուրաքանչյուր ճաշ կարող է մինչև 45 րոպե տևել՝ սնելու համար:

- Թեև Դուք ինքներդ ուտում եք, բայց կարիք ունեք, որ սպասարկողը ներկա լինի՝ օգնելու իրերը բարձրացնել՝ շնչահեղձ լինելու խնդիրների պատճառով:
- Դուք կարիք ունեք, որպեսզի շաբաթական երկու անգամից ավելի լոգնաք ընդունեք, քանի որ թափում եք ուտելիքը, անմիզապահուստություն և մաշկի խնդիրներ ունեք:
- Դուք փխրուն մաշկ ունեք և խոցելի եք տաք կետերի հանդեպ, որոնք կարող եք անկողնային խոցերի կամ պառկելախոցերի վերածվել: Կարիք կա երաշխավորել, որ ոչինչ չի տրորում կամ գրգռում մաշկը, ինչպես օրինակ հագուստը կամ այն, թե ինչպես եք Դուք տեղավորվել Ձեր անվասայլակի մեջ և այլն:
- Ձեր մազերը պետք է շաբաթական մեկ անգամից ավելի շամպունով լվանալ, քանի որ թեփ կա կամ մազերի մեջ ուտելիք է մտնում:
- Լրացուցիչ ժամի կարիք կա՝ IHSS մատակարարի հետ հաղորդակցվելու համար (օրինակ ուղեղային կաթված ունեցող անձի համար, ով պետք է բառերի և այբուբենի գրատախտակ օգտագործի):
- Հեշտությամբ է շնչառական վարակներով հիվանդանում, հետևաբար մազերը լվանալուց հետո միշտ պետք է չորացվի:

## Առնչվող ծառայություններ

Լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ ճաշի պատրաստման համար և/կամ ճաշացանկի պլանավորման համար, որովհետև՝

- Դուք հատուկ սննդակարգի կարիք ունեք, ինչպես օրինակ՝ աղը և շաքարը բացառող սննդակարգ, կամ թարմ ուտելիքներ պահանջող սննդակարգ
- Ձեր սնունդը պետք է կտրտվի կամ այլուրեի պես պատրաստվի
- Դուք ճաշերի միջև հեղուկների կամ թեթև սննդի կարիք ունեք
- Ձեր սննդակարգը և ուտելու ձևը տաբերվում է ընտանիքի մյուս անդամների ուտելու ձևից, հետևաբար ճաշն առանձին է պատրաստվում

Դուք 2-3 անգամ ավելի շատ սննդի կարիք ունեք սպաստիկ ուղեղային կաթվածի պատճառով և հետևաբար ավելի շատ ժամանակի կարիք ունեք՝ ճաշը պատրաստելու, ճաշացանկ պլանավորելու և մաքրելու, գնումներ կատարելու և սնվելու համար:

Հավելյալ ժամերի կարիք կա ճաշից հետո մաքրության համար՝ սեղանը, անվասայլակը և հատակը մաքրելու համար՝ թափված լինելու պատճառով:

Լրացուցիչ ժամանակ է պահանջվում լվացքի համար, քանի որ՝

- Անկողնու լրացուցիչ սավաններ և հագուստը փոխելու համար լրացուցիչ հագուստի կարիք կա՝ անմիզապահության, թափելու, ինչպես նաև նախքան լվալը ցայելու համար:
- Լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ՝ համապատասխանելու համընդհանուր նախազգուշացումներին, երբ մարմնական հեղուկներ են ներառված (մեզ, սերմնահեղուկ, արյուն, թուք, լորձ, փսխանք), ինչպես օրինակ՝ ցայելը, այլ լվացքից առանձնացնելը և առանձին լվալը:
- Պետք է մնալ լվացքի մոտ՝ այն լվանալիս և չորացվելիս՝ գողության պատճառով:
- Հագուստները պետք է դնել լրացուցիչ ցայելու փուլի մեջ՝ մաշկի գերզգայունության պատճառով:

Հավելյալ ժամանակ է անհրաժեշտ գնումների, այլ գործերի համար՝

- հիմնական շուկայի հեռավորության պատճառով:
- Ավելի հաճախ է պետք շուկա գնալ կամ ավելի քան մեկ տեղ գնալու կարիք կա՝ հատուկ սննդակարգի, թարմ սննդի անհրաժեշտության պատճառով:
- Հաճախ կարիք կա դեղեր ստանալու՝ դեղատոմսերի չափերի Medi-Cal-ի սահմանած սահմանափակման պատճառով, քանի որ հնարավոր չէ բոլոր տեղերը մեկ տեղում գտնել:
- Ցածր եկամտով տարածքներում ապրելը, շուկաները ավելի քիչ են և ավելի մարդաշատ, որը նշանակում է, որ ավելի երկար պետք է հերթի մեջ սպասել:
- Կարիք կա օգտվելու հանրային տրանսպորտից և տաքսիներից:

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցաշարը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝*  
<http://www.disabilityrightsca.org/ListofGrantsAndContracts.html>